«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ (ԼՐԻՎ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ) ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ՓՈԽԱՏԵՂՄԱՆ) ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված 1
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի Գիտական խորհրդի
2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 73-Լ որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎՃԱՐՈՎԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ (ԼՐԻՎ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ), ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ՓՈԽԱՏԵՂՄԱՆ) ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԲԱՆ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը (այսուհետ՝ Ինստիտուտ) կրթության կազմակերպման հաջողություններից է համարում սովորողների բարձր առաջադիմությունը և ըստ առաջադիմության խրախուսման արդյունավետ համակարգի ներդրումը:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն քաղաքականությամբ և ընթացակարգով սահմանվում է Ինստիտուտի տեսլականը, սկզբունքները, նպատակը և խնդիրները, սովորողների ուսման վարձավճարի (լրիվ և մասնակի) փոխհատուցման, անվանական կրթաթոշակների հատկացման կարգը և պայմանները, պետության կողմից տրվող ուսանողական նպաստների լրիվ փոխհատուցումը և փոխատեղման ընթացակարգը:
2. Սույն քաղաքականության և ընթացակարգի համար իրավական հիմք են հանդիսանում «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, Հայաստանի Հանրապետության 2021թ. հոկտեմբերի 28-ի N 1752-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ տալու» կարգը և Ինստիտուտի կանոնադրությունը:
3. Սույն քաղաքականության և ընթացակարգի գործողությունը տարածվում է վճարովի համակարգում սովորողների (բակալավր, մագիստրատուրա, ասպիրանտուրա, հայցորդություն) վրա:
4. Ինստիտուտում գործում է ուսանողական նպաստի տեսքով ուսման վճարի լրիվ և մասնակի փոխհատուցման ընթացակարգ:
5. Ուսանողական նպաստը սովորողի ուսման վճարի (լրիվ կամ մասնակի) փոխհատուցում է, որն տրվում է Ինստիտուտի բյուջեի միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

6. Սույն քաղաքականության և ընթացակարգի 31-րդ կետով, ինչպես նաև այլ իրավական ակտ երով սահմանված մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:
7. Անհարգելի պատճառներով (անբավարար գնահատական ստանալու կամ անհարգելի պատճառով քննությանը չներկայանալու դեպքերում) ակադեմիական պարտքերի մարման շրջանում քննություններ հանձնած ուսանողները, ինչպես նաև ուսման վարձավճարի պարտք ունեցող ուսանողները ուսման վարձավճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցման իրավունքից չեն օգտվում:
8. Ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողը կորցնում է արտոնությունը, եթե.
   1) Ունի ուսման վարձավճարի նախորդ տարվա (ների) պարտք.
   2) Նախորդ ուսումնական տարում (քննաշրջանում՝ առանց վերահանձնումների) ունեցել է անհարգելի պատճառներով գոյացած ակադեմիական պարտք:
9. Ըստ առաջադիմության՝ ՄՈԳ-երի ցուցակները տրամադրվում են բակալավրի և մագիստրատուրայի բաժինների կողմից:
10. Ցուցակները քննարկվում է ֆակուլտետների խորհուրդների նիստերում և հաստատվում ռեկտորի հրամանով: Ռեկտորի կողմից հաստատված ցուցակները հրապարկվում են Ինստիտուտի կայք էջում, Ինստիտուտի ֆակուլտետների մոտ տեղադրված ցուցատախտակներում և սոցիալական ցանցերում:
11. Ցուցակներում անճշտություններ, վրիպակներ, սխալներ, ինչպես նաև սույն քաղաքականության և ընթացակարգի դրույթների խախտումներ հայտնաբերելիս ռեկտորը իրավասու է տվյալ մասնագիտության նպաստառուների ցուցակը հետ վերադարձնել՝ նոր մրցույթ կազմակերպելու համար: Անճշտություններ, վրիպումներ, սխալներ և ընթացակարգային խախտումներ թույլ տված անձինք ենթակա են կարգապահական պատասխանատվության:
12. Ուսումնառությունն ընդհատած (ժամկետային զինծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում):

2. ՏԵՍԼԱԿԱՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

13. ***Տեսլականը***

Ուսանողության շրջանում ձևավորել, մրցակցության պայմաններում, ըստ առաջադիմության գնահատված լինելու համոզմունքը:

14. ***Սկզբունքները***

Ինստիտուտը սույն քաղաքականությունը և ընթացակարգն իրականացնելիս առաջնորդվում է արդարության, օրինականության, օբյեկտիվության, թափանցիկության և հասարակական պատասխանատվության սկզբունքներով:

15. ***Նպատակը***

Նպաստել ուսանողության առաջադիմության բարձրացմանը, կրթական, հետազոտական, հասարակական աշխատանքներում ակտիվ ներգրավվածությանը:

16. ***Խնդիրները***

16.1 ապահովել կրթության արդար մրցակցության պայմաններ,

16.2 ներդնել ուսանողական նպաստների և անվանական կրթաթոշակների էլեկտրոնային հայտերի ընդունման համակարգ,

16.3 ներդնել ուսանողական նպաստների և անվանական կրթաթոշակների հատկացման թափանցիկ և հաշվետու համակարգ:

3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՏՐՎՈՂ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՎ ՓՈԽԱՏԵՂՄԱՆ (ռոտացիա) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

17. Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բարձրագույն ուսումնական հաստատությունների համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի և մասնագիտությունների, բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը (անվճար տեղեր), որը տեղափոխվում է կուրսից կուրս:

18. Պետությունը նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած տեղերի քանակին համապատասխան՝

18.1 Առաջին կուրսում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրամադրվում է Ինստիտուտի ընդունելության կանոններով սահմանված կարգով Ինստիտուտ ընդունված ուսանողներին:

18.2 Հաջորդ կուրսերում ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի լրիվ փոխհատուցում տրվում է մեկ ուսումնական տարվա քննությունների(ստուգարքների) արդյունքներով առավել բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներին՝ մրցույթային հիմունքներով: Սույն պարբերության պահանջները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած սովորողների վրա՝ պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

18.3 Օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերին՝

- «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան անձանց,
- 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխա ճանաչված անձանց, ֆունկցիոնալության ծանր և խորը, իսկ երեխաների դեպքում նաև միջին աստիճանի սահմանափակում ունեցող անձանց՝ համաձայն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
- ժամկետային պարտադիր զինվորական ծառայության ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողներին՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի,
- դ. զոհված (մահացած) զինծառայողների մինչև 27 տարեկան զավակներին, ծնողներին, ամուսնուն (կնոջը)՝ համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.
- պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին, ընդ որում,

Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով կարող են սահմանվել նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողների ուսման վճարի փոխհատուցման այլ պայմաններ:

19. Մրցույթային հիմունքներով փոխատեղումն իրականացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

1) նախորդ ուսումնական տարվա քննությունների արդյունքներով առավել բարձր առաջադիմության ՄՈԳ–ով և առանց վերահանձնումների (անհարգելի բացակայություն),
2) հավասար պայմանների դեպքում երկրորդ կուրսում առավելությունը տրվում է առաջին կուրսի վերջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում առավել բարձր առաջադիմության ՄՈԳ–ով ուսանողներին և առանց վերահանձնումների (անհարգելի բացակայություն),
3) հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա, իսկ վերջինիս հավասարության դեպքում՝ դրան նախորդող ուսումնական տարվա քննությունների (ստուգարքների) արդյունքներով առավել բարձր առաջադիմության ՄՈԳ–ով ուսանողներին և առանց վերահանձնումների (անհարգելի բացակայություն):

20. Ուսանողների փոխատեղումն իրականացվում է յուրաքանչյուր տարի, ուսումնական գործընթացն սկսելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում:

21. Փոխատեղման ենթակա ուսանողների ցուցակները համապատասխան ստորաբաժանումները կազմում և ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Ուսումնագիտական գծով պրոռեկտորը: Փոխատեղման ցուցակների հիման վրա ռեկտորը տալիս է հրաման:

4. ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Համակարգ 1

22. Ինստիտուտի վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տասը տոկոսին՝ ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, Ինստիտուտի միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը (80 և ավել ՄՈԳ) և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող ուսանողներին.

1) Սոցիալապես անապահով (ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին՝ 30 տոկոս.

2) 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը՝ 50 տոկոս.

3) 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միածնող) ուսանողներին՝ 50 տոկոս.

4) մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին՝ 50 տոկոս.

5) երեք և ավելի անչափահաս կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին՝ 50 տոկոս.

6) 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, այդ թվում՝ հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին՝ 30 տոկոս.

7) մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին՝ 30 տոկոս.

8) Սոցիալապես անապահով /ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցո ընտանիքների/ ուսանողներին՝ առնվազն 20տոկոս:

9) Այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝

- վճարովի ուսուցման համակարգում երկու և ավելի ուսանող երեխա ունեցող կամ ընտանիքի երկու և ավելի անդամ ուսանողներին՝ 10 տոկոս
- Ինստիտուտում առնվազն 10 տարվա անընդմեջ աշխատանքային ստաժ ունեցող աշխատող կամ աշխատողի երեխա ուսանողներին՝ 10 տոկոս
- առանձնահատուկ դեպքերում, Ինստիտուտի ռեկտորի որոշմամբ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին՝ մինչև 30 տոկոս:

10) ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0.1 միավոր տարբերությամբ՝ 50 տոկոս.

11) Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից բակալավրի և մագիստրոսի համար սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում

23. Բակալավրի կրթական ծրագրով ընդունված առաջին կուրսի ուսանողները ուսման վճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության երկրորդ կիսամյակից սկսած:

24. Ինստիտուտը տվյալ տարվա ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման տրամադրման վերաբերյալ մինչև հաջորդ տարվա ապրիլի 1-ը հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետությանկրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազորված մարմին:

25. Բուհում պետության, ինչպես նաև բուհի կողմից ուսման վճարի մասնակի փոխհատուցման մասին դիմումներն ընդունվում են՝

- առկա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքներին հաջորդող չորս շաբաթների ընթացքում.
- հեռակա ուսուցման դեպքում՝ տվյալ ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի ուսումնական պարապմունքներին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

26. Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում Ինստիտուտի կողմից տրամադրվող ուսանողական նպաստը կարող է փոփոխվել:

27. Երկու և ավելի կարգավիճակների համապատասխանող ուսանողների համար կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափ նախատեսող դրույթը:

28. Բուհում մեկից ավելի մասնագիտություններով (կրթական ծրագրերով) նույն կրթական աստիճանով զուգահեռ ուսանելու դեպքում պետության կողմից նպաստի ձևով լրիվ կամ մասնակի փոխհատուցում տրվում է մեկ մասնագիտության (կրթական ծրագրի) համար:

29. Դիմումի հետ պահանջվող փաստաթղթերը ուսանողը ներկայացնում է տարին մեկ անգամ ուսումնական պարապմունքների սկզբին նախորդող և հաջորդող երկու շաբաթների ընթացքում:

30. Ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրվում է նախորդ կիսամյակի առաջադիմության ամփոփ արդյունքների (միջին որակական գնահատականի (ՄՈԳ) հիման վրա:

31. Եթե վերոնշյալ կարգով համեմատության դեպքում ևս ուսանողների առաջադիմության միջին ցուցանիշները հավասար են, ապա ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման դեպքում առավելությունը տրվում է ընդհանուր մասնագիտական և մասնագիտացման դասընթացների քննություններից առավել բարձր ընդհանուր միջին միավոր ունեցող ուսանողին: Նշված ցուցանիշի հավասարության դեպքում հաշվի են առնվում.

1) բակալավրիատի ուսանողների համար՝ նշված դասընթացներից յուրաքանչյուրից ստացված միջին միավորները՝ ըստ վերոնշյալ հերթականության.
2) մագիստրատուրայի ուսանողների համար՝ մասնագիտացման առարկաներից ստացված միջին միավորները:

32. Վերականգնված, այլ բուհերից, Ինստիտուտի այլ մասնագիտություններից կամ հեռակա ուսումնառության համակարգից առկա, կամ առկա ուսումնառության համակարգից հեռակա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողները, ուսման վճարի լրիվ փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել Ինստիտուտում տվյալ մասնագիտությունում, մեկ տարի սովորելուց հետո:

5. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ

ՀԱՄԱԿԱՐԳ 2

33. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի **մասնակի** փոխհատուցում, ըստ առաջադիմության, տրամադրում է՝

33.1 ընտանիքների անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող ուսանողներին՝

- մինչև 5,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 50 տոկոսի չափով,
- 5,01-10,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 60 տոկոսի չափով,
- 10,01-15,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 70 տոկոսի չափով,
- 15,01-20,00 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 80 տոկոսի չափով,
- 20,01-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վճարի 90 տոկոսի չափով:

33.2 Սույն կարգի 33.1 կետով սահմանված փոխհատուցումը տրամադրվում է բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով կրթական աստիճանում՝

- առաջին կուրսում՝ համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա,
- հաջորդ կուրսերում՝ նախորդ ուսումնական տարվա արդյունքներով միջին որակական գնահատականի (այսուհետ՝ ՄՈԳ) առավելագույն արժեքի առնվազն 60 տոկոսի շեմը հաղթահարելու դեպքում.
- մագիստրոսի կրթական աստիճանում՝ առաջին կուրսում նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսի, իսկ հաջորդ կուրսերում ՄՈԳ-ի առավելագույն արժեքի առնվազն 70 տոկոսի շեմն ապահովելու դեպքում:

34. Սույն կարգի 33-րդ կետով սահմանված փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը բուհին է ներկայացնում յուրաքանչյուր կիսամյակ՝ սույն կարգի 25-րդ կետում սահմանված ժամկետներում:

35. սոցիալական աջակցություն ստացող սահմանամերձ համայնքների բնակավայրերի ուսանողներին՝

35.1 Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքների բնակավայրերում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվող ու տվյալ համայնքի հանրակրթական ուսումնական հաստատությունն ավարտած ուսանողներին:

35.2 մարտական գործողություններին մասնակցած ուսանողներին

35.3 առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով սովորող՝ երկու և ավելի անչափահաս երեխա ունեցող ուսանողներին

36. Սույն կարգի 35-րդ կետով սահմանված փոխհատուցումը տրամադրվում է՝

36.1 առաջին կուրս ընդունված ուսանողներին՝

ա. բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով՝ համապատասխան մասնագիտության (կրթական ծրագրի) համար սահմանված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով,

բ. մագիստրոսի կրթական աստիճանի դեպքում՝ նախորդ կրթական աստիճանի ՄՈԳ-ի 60 տոկոսը հաղթահարած ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով.

2) հաջորդ կուրսերում՝

ա. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 60-70 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 50 տոկոսի չափով,

բ. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 71-79 տոկոս ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 60 տոկոսի չափով,

գ. նախորդ ուսումնական տարվա արդյունքներով ՄՈԳ-ի առավելագույն արժեքի 80 տոկոս և բարձր ՄՈԳ ունեցող ուսանողներին՝ տարեկան ուսման վճարի 70 տոկոսի չափով:

37. Սույն կարգի 18.3, 33.1 և 35.3 ենթակետերով սահմանված ուսանողների խմբերին ուսանողական նպաստները համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում տրվում են առաջին կուրսից, ինչպես նաև ուսումնառության ընթացքում համապատասխան կարգավիճակը ձեռք բերելու պահից և դադարեցվում է համապատասխան կարգավիճակը կորցնելու պահից:

38. Ուսումնառությունն ընդհատած (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ուսանողական նպաստ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում):

39. Նպաստառու ուսանողի սոցիալական վիճակի փոփոխության դեպքում բուհի կողմից տրամադրվող ուսանողական նպաստը կարող է փոփոխվել:

40. Ուսանողական նպաստներ տալու գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է պետական կառավարման լիազորված մարմինը:

6. ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

41. վճարովի համակարգում սովորող ասպիրանտների և հայցորդների համար գործում է 50% և 75 % ուսման վարձի փոխհատուցման համակարգը, եթե վերջիններս բավարարում են հետևյալ պայմանների.

1) միաժամանակ ունեն բարձր առաջադիմություն և գտնվում են սոցիալապես անապահով վիճակում (գործազուրկ են կամ ունեն երեքից ավել անչափահաս երեխա, կամ հաշմանդամ կամ խնամքի ենթակա ծնողներ կամ երկկողմանի ծնողազուրկ են).

2) ունեն ավելի քանի 5 տարվա ներդրում ինստիտուտի ուսումնագիտական գործունեության մեջ, միջազգային հեղինակավոր ամսագրերում (web of science, scopus) հրատարակել են գիտահետազոտական աշխատանքներ:

42. Ասպիրանտի կամ հայցորդի ուսման վճարի մասնակի փոխհատուցումն իրականացվում է տարին մեկ անգամ:

43. Մասնակի փոխհատուցման դիմումներըև պահանջվող փաստաթղթերը (թղթային կամ էլեկտրոնային) ներկայացվում են Ինստիտուտի մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժին՝ յուրաքանչյուր տարվա նոյեմբերի 30-ը ներառյալ:

44. Ասպիրատների և հայցորդների ուսման վճարի մասնակի փոխհատուցումը հատկացվում է ռեկտորի հրամանով մագիստրատուրայի և ասպիրանտուրայի բաժնի կողմից ներկայացված դիմումների և սույն քաղաքականությամբ և ընթացակարգով պահանջվող փաստաթղթերի հիման վրա:

7. ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

45. Ինստիտուտն իրավասու է սեփական և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանել անվանական կրթաթոշակներ:

46. Անվանական կրթաթոշակները տրվում են մրցութային կարգով և վերանայվում յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտից հետո:

47. Անվանական կրթաթոշակ նշանակվում է առկա ուսուցման համակարգիբակալավրիատի առավել աչքի ընկնող, վերջին 4 կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն ունեցող, հետազոտական, հասարակական ակտիվություն ցուցաբերած, սպորտային հաջողություններ գրանցած ուսանողներին: Մագիստրատուրայի ուսանողների դեպքում հաշվի են առնվում նաև բակալավրիատում ցուցաբերած առաջադիմության արդյունքները, գիտահետազոտական (գիտահետազոտական ակտիվություն է համարվում ուսանողական գիտական ընկերության անդամ լինելը, գիտահետազոտական թեմա ունենալը, Ինստիտուտի ուսանողական գիտական ժողովներին գիտական կամ հետազոտական ելույթներով հանդես գալը, Ինստիտուտի կողմից կազմակերպված գիտական, հետազոտական սեմինարներին, աշխատաժողովներին մասնակցությունը), ցուցաբերած հասարակական ակտիվությունը և գրանցած սպորտային հաջողությունները:

48. Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունները քննարկում են ֆակուլտետների խորհուրդները, որի վերաբերյալ հիմնավորված եզրակացություն են ներկայացնում Ինստիտուտի Գիտական խորհուրդ հաստատման:

49. Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է անվանական կրթաթոշակները, որի հիման վրա Ինստիտուտի ռեկտորը տալիս է համապատասխան հրաման:

50. Անվանական կրթաթոշակից զրկելը կատարվում է Գիտական խորհրդի որոշմամբ: Ուսանողը զրկվում է նշանակված անվանական կրթաթոշակից, եթե ուսումնական կիսամյակի ավարտին չի համապատասխանում սույն կանոնակարգի 50-րդ կետով սահմանված չափանիշներին:

51. Անվանական կրթաթոշակի կարող են հավակնել անվճար և վճարովի համակարգի ուսանողները:

52. Անվանական կրթաթոշակը կարող է սահմանվել մեծ ավանդ ունեցող մարզիկների, մարզիչների, գիտության, կրթության և հասարակական անվանի գործիչների անունով:

53. Բարերարների կողմից տրված կրթաթոշակները կարող են տրամադրել իրենց կողմից սահմանված կարգով:

8. ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

54. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է՝ ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար (արվեստի բնագավառի բուհերում՝ նաև մասնագիտական մրցույթ-ստուգատեսների հաղթողներին), ինչպես նաև նպատակային ուսուցմամբ սովորող սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին:

55. Ուսանողների հասարակական ակտիվությունը բնութագրող ցուցանիշներն են՝

55.1 մասնակցությունը ֆակուլտետի և բուհի ուսանողական, հասարակական աշխատանքներին.

55.2 զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակած աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում).

55.3 մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին.

55.4 այլ հասարակական և ստեղծագործական նախաձեռնություններ՝ բուհի հայեցողությամբ:

56. Սույն կարգի իմաստով ուսանողների պատշաճ վարքագիծը բուհի կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված պարտականությունների կատարումն է:

57. Հայաստանի Հանրապետության կառավարությունը, յուրաքանչյուր տարի, Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բուհերի համար նախատեսված միջոցների սահմաններում, ըստ բուհերի, հաստատում է պետական կրթաթոշակների թիվը և չափը:

58. Առաջին կուրսում պետական կրթաթոշակ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության պետական և ոչ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ տեղերում ընդունված բոլոր ուսանողներին:
59. Պետության կողմից կրթաթոշակ տրվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող բուհերի ուսանողներին: Մյուս բուհերում կրթաթոշակի հատկացման որոշումն ընդունում է հիմնադիրը:
60. Ուսանողին պետական կրթաթոշակի տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին՝ համաձայն սույն կարգի 19-22-րդ կետերով նախատեսված պայմանների: Նախատեսված պայմանները չապահովելու, դեպքում ուսանողը զրկվում է պետական կրթաթոշակից: Պետական կրթաթոշակից զրկված ուսանողը կարող է ընդգրկվել ուսումնական նպաստառուների համակարգում՝ սույն կարգի պահանջները բավարարելու դեպքում:
61. Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են այլ ուսանողների:
62. Ուսումնառությունն ընդհատած (պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու, առողջական վիճակի պատճառով ակադեմիական արձակուրդում գտնվելու, հղիության և ծննդաբերության, ինչպես նաև մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքերում) ուսանողը վերականգնվելիս պահպանում է նախկինում ունեցած կրթաթոշակ ստանալու իրավունքը (Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված կրթաթոշակ ստացողների ընդհանուր թվաքանակի շրջանակներում):
63. Ուսման վարձի փոխհատուցմամբ առկա ձևով ուսուցանող՝ 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող և հաշմանդամ երեխա ճանաչված ուսանողները, ինչպես նաև ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունեցող ուսանողները հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում ստանում են կրթաթոշակ՝ 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամություն և հաշմանդամ երեխա կարգավիճակ կամ ֆունկցիոնալության ծանր և խորը աստիճանի սահմանափակում ունենալու ամբողջ ժամանակահատվածում՝ անկախ ստացվող այլ նպաստներից, թոշակներից կամ այլ դրամական վճարումներից:
64. Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ տվյալ բուհում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետական կրթաթոշակի չափը:
65. Պետական կրթաթոշակների ձևակերպման գործընթացն իրականացնում է բուհը:
66. Բուհը կարող է սեփական միջոցների հաշվին սահմանել անվանական կրթաթոշակներ:

67. Բուհերը մինչև տվյալ տարվա հոկտեմբերի 30-ը, իսկ երկրորդ կիսամյակի համար մինչև մարտի 30-ը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (որպես բյուջետային հատկացումների կարգադրիչ հանդիսացող մարմին) են ներկայացնում սույն կարգի 5-րդ կետի 2-րդ ենթակետով, 6-րդ և 7-րդ կետերով սահմանված ուսանողների խմբերի վերաբերյալ տվյալները՝ համապատասխան ֆինանսական միջոցներ ստանալու համար:

68. Ուսանողական նպաստի և պետական կրթաթոշակի տրամադրման նպատակով յուրաքանչյուր տարվա սկզբին տվյալ տարվա պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին բյուջետային հատկացումների կարգադրիչ հանդիսացող պետական մարմնի և համապատասխան բուհի միջև կնքվում են նպաստի և պետական կրթաթոշակի տրամադրման մասին պայմանագրեր՝ նկատի ունենալով ուսանողական նպաստ և պետական կրթաթոշակ ստացողների թիվը: Տվյալ տարում ընդունելության և նախորդ ուսումնական տարվա արդյունքների ամփոփումից հետո պետական համապատասխան մարմնի և բուհերի միջև կնքված պայմանագրերում կատարվում են անհրաժեշտ փոփոխություններ»:

9. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

69. Սույն ընթակարգի 25-րդ և 34-րդ կետերը ուժի մեջ են մտնում 2022 թվականի սեպտեմբերի 1-ից:

70. Սույն ընթացակարգը ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած ճանաչել գիտական խորհրդի 2020 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 8-Լ որոշմամբ հաստատված «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի «Վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ և մասնակի) պետության կողմից ուսման վարձավճարների լրիվ փոխհատուցման (փոխատեղման) և ներբուհական անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականությունը և ընթացակարգը»:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

71. Պետության, ինչպես նաև բուհի կողմից ուսման վճարի փոխհատուցում ստանալու և սույն ընթացակարգի կետով նախատեսված դիմումներն ընդունելու համար բուհն իր պաշտոնական կայքում, հաստատության հայտարարությունների համար նախատեսված վայրում, ուսանողների համար տեսանելի վայրերում (ուսանողների պատշաճ իրազեկումն ապահովելու համար), հրապարակում է հայտարարություն, որում պարտադիր նշվում են դիմումների ընդունման ժամկետները, համապատասխան փաստաթղթերի ցանկը:

72. Սույն քաղաքականությունն ու ընթացակարգն ուժի մեջ է մտնում Գիտական խորհրդի կողմից հաստատվելու պահից:
73. Սույն քաղաքականության և ընթացակարգի լրացումները, փոփոխությունները և օրինակելի ձևերը հանդիսանում են քաղաքականության և ընթացակարգի անբաժանելի մասը:
74. Լրիվ կամ մասնակի ուսման վճարի փոխհատուցման համար հիմք են հանդիսանում բարձր առաջադիմությունը և մրցակցությունը՝ հաստատված սահմանաքանակների շրջանակներում:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ԴԱՎԻԹ ԽԻԹԱՐՅԱՆ

28.12. 2021Թ.

ԵՐԵՎԱՆ

Ձև 1

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿԱՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ
ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԻՄՈՒՄ
(Համակարգ 2-ի դեպքում)

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
ռեկտոր

_____
Անուն, ազգանուն

նույն ինստիտուտի _____ կրթական ծրագրի
(բակալավր, մագիստրատուրա)

_____ ուսուցման, ___ կուրսի, ___ խմբի
(առկա, հեռակա)

_____ մասնագիտությամբ,

_____ մասնագիտացմամբ

_____ -ից
(ուսանողի անուն, ազգանուն, հայրանուն)

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿԱՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ

ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Համաձայն «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ եվ մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) եվ անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականության և ընթացակարգի _____ կետի՝ խնդրում եմ քննարկել ուսման վճարիս փոխհատուցման չափը _____ կիսամյակի կամ 20__ - 20__ ուսումնական տարվա համար:

Կից ներկայացնում եմ"[1]

1. անձնագրի (նույնականացման քարտի, սոցիալական քարտի) պատճեները
2. _____
3. _____
4. _____

[1]Ներկայացվում են այն փաստաթղթերի պաճեները, որոնք հավաստում են քաղաքականության և ընթացակարգի որևէ կետով համապատասխանելու և ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստանալու իրավունքը:

Դիմող՝ _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

«———» ——————————— 20—— թ"

Ձև 2

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿԱՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ

ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ
(Համակարգ 2-ի դեպքում)

1-ԻՆ ԿՈՒՐՍ		2-ՐԴ ԿՈՒՐՍ		3-ՐԴ ԿՈՒՐՍ		4-ՐԴ ԿՈՒՐՍ		5-ՐԴ ԿՈՒՐՍ	
1-ին կիս"ՄՈԳ	2-րդ կիս"ՄՈԳ	3-րդ կիս"ՄՈԳ	4-րդ կիս"ՄՈԳ	5-րդ կիս"ՄՈԳ	6-րդ կիս"ՄՈԳ	7-րդ կիս"ՄՈԳ	8-րդ կիս"ՄՈԳ	9-րդ կիս"ՄՈԳ	10-րդ կիս"ՄՈԳ

Ուսման վճարի մասնակի փոխհատուցման տոկոսաչափը՝ ——————————— %

Պաշտոն	Ստորագրություն	Անուն, ազգանուն
Ուսումնագիտական բաժնի ղեկավար		
Ֆակուլտետի պատասխանատու		
Հաշվապահ		

Ձև 3

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԿԱՄ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԻՄՈՒՄ

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ» հիմնադրամի
ռեկտոր

_____

Անուն, ազգանուն

նույն ինստիտուտի _____ կրթական ծրագրի
(բակալավր, մագիստրատուրա)

_____ ամբիոնի, ասպիրանտ/հայցորդ

_____ -ից
(սովորողի անուն, ազգանուն, հայրանուն)

ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԿԱՄ ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅԱՆ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԴԻՄՈՒՄ

Համաձայն «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ եվ մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) եվ անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականության և ընթացակարգի _____ կետի՝ խնդրում եմ քննարկել ուսման վճարիս փոխհատուցման չափը _____20— – 20— ուսումնական տարվա համար:

Կից ներկայացնում եմ"[2]

5. անձնագրի (նույնականացման քարտի, սոցիալական քարտի) պատճեները
6. _____
7. _____
8. _____

Դիմող՝ _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

«_____» _____ 20____ թ"

---

[2]Ներկայացվում են այն փաստաթղթերի պաճեները, որոնք հավաստում են քաղաքականության և ընթացակարգի որևէ կետով համապատասխանելու և ուսման վճարի մասնակի փոխհատուցում ստանալու իրավունքը:

Ձև 4

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ[3]

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ եվ մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) և անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականության և ընթացակարգի --րդ գլխի դրութները, ներքոնշյալ ուսանողը (ները)

1. _____

Անուն, ազգանուն, հայրանուն, կուրս, մասնագիտություն, բակալավր/մագիստրատուրա

2. _____

Անուն, ազգանուն, հայրանուն, կուրս, մասնագիտություն, բակալավր/մագիստրատուրա

4 կիսամյակում անընդմեջ ունեն գերազանց առաջադիմություն, ցուցաբերել են հասրակական ակտիվություն (օրինակ՝ մասնակցել են Ինստիտուտի կողմից կազմակերպվող միջոցառումներին, եղել են կազմակերպիչ, կամ մասնակից, ներկայացրել են Ինստիտուտի նախաձեռնությունները ՀՀ-ում, ուսանողներին նվիրված միջոցառումներում մեծ ներդրում են ունեցել, Ինստիտուտի անունից քարոզել են առողջ ապրելակերպը և ֆիզիկական ակտիվությունը և այլն), կամ ակտիվ մասնակցություն են ունեցել իրենց մասնագիտության հետ կապ ունեցող հետազոտական աշխատանքներում, տպագրել են հետազոտական կամ գիտական հոդվածներ ազգային և միջազգային պարբերականներում, ներկայացրել են ուսումնական գործընթացի բարեփոխումների առաջարկներ Ինստիտուտի ղեկավարությանը և այլն, ազգային և միջազգային մակարդոկով իրենց մասնագիտության հետ կապված գրանցել են սպորտային հաջողություններ:

Եզրակացության մեջ նշվող առաջադիմությունը, հետազոտական և հասրակական ակտիվությունը, սպորտային հաջողությունները հավաստող փաստաթղթերը կցվում են:

Եզրակացությունը կազմեցին _____

ֆակուլտետի անվանում

ֆակուլտետի խորհրդի նախագահը և անդամները:

Պաշտոն	Ստորագրություն	Անուն, ազգանուն
Ֆակուլտետի խորհրդի		

[3]Եզրակացության տեքստը խորհրդատվական է և ուղենիշային: Այն կարող է լրացվել կամ փոփոխվել:

նախագահ		
Անդամ		

Ձև 5

ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿԱՄ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀՐԱՄԱՆ

«——»————— 20—թ" N ____ -Լ

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ եվ մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) եվ անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականության և ընթացակարգի –րդ կետը,

_____ ֆակուլտետի խորհրդի
ֆակուլտետի անվանումը

_____ թիվ —— արձանագրությունը և
ամսաթիվ

_____ ֆակուլտետի խորհրդի
ֆակուլտետի անվանումը

_____ թիվ —— արձանագրությունը և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և
ամսաթիվ
սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության 56—րդ կետի 12-րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Առկա կամ հեռակա ուսուցման համակարգով սովորող ներքոնշյալ ուսանողների ուսման վարձավճարը 20— -20— ուսումնական տարվա —— կիսամյակի համար մասնակի փոխհատուցել"

Հ/Հ	Անուն, ազգանուն, հայրանուն	Կուրս/խումբ	Մասնագիտություն	ՄՈԳ	Կետ-ենթակետ	Փոխհատուցման %
1						
2						

3						

2. Հաշվապահությանը կատարել համապատասխան հաշվառում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստարգրման օրվանից:

ՌԵԿՏՈՐ (ժամանակավոր պաշտոնակատար) ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Ձև 6

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀՐԱՄԱՆ

«——»————— 20—թ" N ____ -Լ

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ եվ մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) եվ անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականության և ընթացակարգի 49–րդ կետը, Ինստիտուտի գիտական խորհրդի —————— թիվ —— արձանագրությունը և
ամսաթիվ
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի ևսպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության 56—րդ կետի 12–րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Առկա ուսուցման համակարգով սովորող ներքոնշյալ ուսանողներին տրամադրել 20— -20— ուսումնական տարվա համար անվանական կրթաթոշակ հետևյալ չափերով"

Հ/Հ	Անուն, ազգանուն, հայրանուն	Կուրս/խումբ	Մասնագիտություն	ՄՈԳ	Կետ–ենթակետ	Փոխհատուցման %
1						
2						
3						

2. Հաշվապահությանը կատարել համապատասխան հաշվառում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՌԵԿՏՈՐ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ

Ձև 7

ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐԻՆ ԿԱՄ ՀԱՅՑՈՐԴՆԵՐԻՆ ՈՒՍՄԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՀՐԱՄԱՆ

«——»————— 20—թ" N ____ -Լ

Հիմք ընդունելով «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի Վճարովի համակարգում սովորողների ուսման վճարի (լրիվ եվ մասնակի), պետության կողմից ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման (փոխատեղման) եվ անվանական կրթաթոշակների հատկացման քաղաքականության և ընթացակարգի 44–րդ կետը և «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի ևսպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի կանոնադրության 56—րդ կետի 12–րդ ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. _____ ամբիոնի ներքոնշյալ ասպիրանտ/հայցորդ –ին տրամադրել 20— -20— ուսումնական տարվա համար ուսման վճարի մասնակի փոխհատուցում հետևյալ չափերով"

Հ/Հ	Անուն, ազգանուն, հայրանուն	Ամբիոն	Մասնագիտություն	Կետ–ենթակետ	Փոխհատուցման %
1					
2					
3					

2. Հաշվապահությանը կատարել համապատասխան հաշվառում:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՌԵԿՏՈՐ ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ